ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԴՊՐԵՎԱՆՈՒՑ ՎԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԴՊՐԵՎԱՆՈՒՑ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐՈՒՆ, ԲԱՐԵՐԱՐՆԵՐՈՒՆ ԵՎ ՆՎԻՐԱՏՈՒՆԵՐՈՒՆ

Դպրեվանքի քսաներկուերորդ տարեշրջանի պաշտոնական վերաբացումը կատարվեցավ 11 հոկտեմբերի հինգշաբթի առավոտյան ժամը 8-ին, 47 աշակերտներով բաշխված վեց դասարաններու։

Այս տարի առաջին դասարան մը կազմեցինք 15 նոր սաներով, իսկ Քահանայից դասարանի շրջանավարտներուն տեղ 5 նոր թեկնածուներ ևս ընդունվեցան։

Վեհափառ Հայրապետի և Վանուցս Սրբազան Եպիսկոպոսներուն հետ համախորհուրդ որոշեցինք հիմնադրամ մը գոյացնել Սրբոց Վարդանանց և Ղևոնդյանց 1.500-ամյա հիշատակին հավերժացման համար։ Հիմնադրամը պիտի կրե ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ անունը, և եկամուտը պիտի հատկացվի Դպրեվանքին եկեղեցականներ, մասնավորաբար քահանաներ պատրաստելու համար։ Հիմնադրամով պիտի գնվին հասութաբեր կալվածներ, որոնք պիտի կրեն նվիրատուներուն և կտակարարներուն անունները։

Սույն նպատակին համար Աթոռիս Բարերարներեն պրն. Վահրամ Յուքյուճյան 2.000 անգլ. ոսկիի նվիրատվությամբ մը ըրավ։ Իսկ Եվրոպայեն պատվական ազգային մը, որ իր անունը կուզե անհայտ թողուլ, կտակեց մոտ 23.000 տոլար հետ մահու գործադրելի։ Կյուլլապի Կյուլպենկյան հիմնադրամի 40.000 տոլարի նվիրաբերությամբ կկառուցվի մեծ շենք մը, որ պիտի ծառայե իբրև Դպրեվանք և նաև իբրև Մատենադարանթանգարան։ Պրն. Մարքո Պաքրճյանի 10.000 անգլ. ոսկիի նվիրատվությամբ Լիբանանի լեռներու վրա հարմար հող մը գնվեցավ 52,500 քառ. մեթր տարածությամբ։ Այս հողին վրա շուտով պիտի կառուցվի Դպրեվանքի ամառանոցի շենքը։ Քանատայեն հանգուցյալ Լևոն Պապայան կտակած է 20.000 տոլար Դպրեվանքի մեջ եկեղեցականներ պատրաստելու համար. գումարը պիտի վճարվի չորս տարիին, տարեկան 5.000 տոլար։

Վստահ ենք, որ այս պատվական ազգայիններուն սրտաբուխ նվիրատվության ժեստը ուրիշ բարի հոգիներու ևս օրինակ պիտի ըլլա։ Ամենուն կհայտնենք մեր ջերմ շնորհակալություններն ու խոր երախտագիտությունը։

1950—51 տարեշրջանի մեր հունձքը հետևյալն է.— Ժառանգավորաց բաժինեն ունեցանք ինը շրջանավարտներ, որոնցմե հինգը կուսակրոն քահանայության համար կպատրաստվին։ Ընծայարանի բաժինէն երեք շրջանավարտ, որոնցմե երկուքը ձեռնադրվեցին աբեղա, իսկ երրորդը՝ Հովհաննես Գասպարյան, ղրկեցինք Միացյալ Նահանգները, Քեյմպրիճի Եպիսկոպոսական Աստվածաբանական Ճեմարանին մեջ ուսանելու։ Իսկ Քահանայից դասարանեն ունեցանք վեց շրջանավարտներ, որոնցմե երկուքը Տ. Բաբգեն և Տ. Աշոտ քահանա ձեռնադրված էին անցյալ տարի. մյուսները մենք ձեռնադրեցինք յունիսի 24-ին։ Մեր ուսանողներեն հետևյալները որպես ուսանող կամ հովիվ մեկնեցան.— Տ. Եղիշե աբեղա հովիվ Թրոյի, Ամերիկա. Տ. Բաբգեն քահանա հովիվ Պոստոնի, Ամերիկա. Տ. Թաթուլ քահանա հովիվ Դամասկոսի, Սուրիա. Տ. Ատոմ քահանա հովիվ Նիսի, Ֆրանսիա. Տ. Վարդան քահանա օգնական հովիվ Ատիս Ապապայի Հայոց Եկեղեցւո և Տնօրեն տեղվոյն վարժարանին։ Կարապետ Սրկ. Փոթուգյան ուսանող Պըրքլի Աստվածաբանական ճեմարան, Նյու Հեյվըն, Ամերիկա, և պրն. Կարապետ Փափազյան ուսանող Ֆիլատելֆիո Աստվածաբանական ճեմարան, Ամերիկա։ Տ. Հրանտ և Տ. Վաչե աբեղաներ Պեյրութի Ամերիկյան Համալսարանի Անգլերեն բաժնի մասնավոր դասընթացքին կըհետևին, իսկ Տ. Արտակ աբեղա՝ Պեյրութի Ֆրանսիական Համալսարանի լեզվական դասընթացքին։

Դպրեվանքի Տեսչությունը շատ ուրախ պիտի ըլլա տեղեկություններ հաղորդելու հետաքրքրվողներուն։

Ամանորի և Ս. Ծննդյան սրտեռանդն մաղթանքներով՝

ԴԵՐԵՆԻԿ ԵՊՈՍԿՈՊՈՍ
Տեսուչ Դպրեվանուց

24 նոյեմբեր 1951
Անթիլիաս, Լիբանան